

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисе, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ սոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ակներեւ է տարբերութիւնը.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. երկրաչափից շնամուծ-
ների օգտին. Նամակ Բագուից. Նամակ Բա-
թումից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակներ Պարիզից.

ԱԿՆԵՐԵՎ Է ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Նորագոյն տեղեկութիւնները, որ ժո-
ղովք է ներքին գործերի մինիստրութիւ-
նը, ցոյց են տալիս, որ այն նախնական
որակի մտքած է տեղական ինքնավարու-
թիւն, համեմատաբար շատ առաջադէմ
են, քան այն նախնականը, որտեղ չը կայ
ինքնավարութիւն: Օրինակ, ինքնավարու-
թիւն ունեցող նախնականներում 35—40
հազար բնակչի վրա զալիս է մէկ բժիշկ,
այն ինչ ինքնավարութիւն չունեցող նա-
խնականներում մէկ բժիշկը զալիս է 72 հա-
զար բնակչի վրա, ուրեմն երկու անգամ
աւելի նուազ թիւով, իսկ Ստաւրոպոլի
նախնականը, որ մինչև այժմ ինքնավար-
ութիւն չունէր է միայն ստացաւ ան-
ցեալ տարի, մէկ բժիշկը զալիս է 160
հազար բնակչի վրա: Ինչպէս վրա ինքնա-
վարութիւն ունեցող նախնականները ծախ-
ւում են տարեկան 25—90 հազար ռուբ-
լի, իսկ ինքնավարութիւն չունեցողները
միայն մի քանի հազար եւ ամենաշատը
մինչև 5 հազար ռուբլի:

Տարբերութիւնը, ինչպէս տեսնում էք,
շատ մեծ է: Նոյնը նկատվում է եւ կըր-
թական գործի վերաբերմամբ: Ինքնավար-
ութիւն ունեցող նախնականներում 54 հա-
զար բնակչից մէկն է ուսանում, իսկ ինք-
նավարութիւն չունեցող նախնականներում
կարողանում է ուսանել միայն 78—111
հազար բնակչից մէկը: Այլ եւս չենք խօ-
սում այն բանի մասին, որ ինքնավարու-
թիւն ունեցող նախնականներում աւելի բա-
ւարար է բարեշէն վիճակի մէջ են նախնա-
կի զանազան մասերի հաղորդակցութիւն-

ները, նախնական վիճակագրական ուսում-
նասիրութիւնը եւ տեղական նախաձեռ-
նութեան արտայայտութիւնը: Ինքնա-
վարութիւն ունեցող նախնականները գիւղա-
ցիներին օգնելու նպատակով կազմակեր-
պել են գիւղատնտեսական բարեօրոշման
միջոցներով մի ընդարձակ գործունէութիւն,
բացել են կատարելագործված մեքենանե-
րի եւ ընտիր սերմերի պահեստներ, օգ-
նում են գիւղացիներին փոխառութիւն-
ներով, կրեդիտով եւ միայն գիւղատնտե-
սութեան զարգացման վրա տարեկան
ծախսում են աւելի քան երկու միլիոն
ռուբլի գումար:

Ճիշդ է, ինքնավարութիւն կամ զեմստվո
ունեցող նախնականները փոքր ինչ աւելի
առաջ են վիճարում, քան այն նախնականե-
րը, որոնք ինքնավարութիւնից զուրկ են:
Սակայն լուրջ քննութիւնը ցոյց է տալիս,
որ եղած տարբերի համեմատ շատ ան-
գամ աւելի մեծ են այն առաւելութիւն-
ները, որ տալիս է ինքնավարութիւնը տե-
ղական ազգայնականութեան: Թէ զարդանա-
ներ չլինելը եւ զանազան բարեօրոշման
միջոցներ աւելի էժան է նստում զեմստվո-
ներին, որովհետեւ նրանք մօտ են ժողովրդին,
կարողանում են գլուխ բերել ամեն մի ծը-
րագիր աւելի ձեռնտու պայմաններով եւ
տեղական ժողովրդի աշակցութեամբ:

Կառավարական շրջանների մէջ քանի
զնում է, աւելի է աւելի ամրանում է այն
համոզումը, որ տեղական ինքնավարու-
թիւն կամ զեմստվո միջոցներ այլ եւս մի
բարի ցանկութեան եւ քաղաքակրթական
նորմաւորութեան խնդիր չէ, այլ անհրա-
ժեշտութեան եւ կենսիկ անխուսափելի
պահանջի մի արդիւնք, որ կոչված է ար-
գասաւորելու գաւառական կեանքը եւ
զրաւելու երկրի մէջ ցրված ոյժերը, խե-
լացի եւ օրինական կերպով գործելու գա-
ւառի տնտեսական եւ բարոյական առա-
ջագիծութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Գիրքն ու կարգադրող պիտի վերաստեղծեն
աշխարհը: Սա բոլոր ազգերի եւ բոլոր տեղերի
«հաւատածն» է: Ուսումից, կրթութիւնից
մարդը ազնուանում է, դանում է պակաս
զաւան, դանում է աւելի բարոյական, բար-
ձր: Ո՞վ կարող է ուրանալ այս տարրական
համարութիւնը: Տեսէք. նոյն իսկ ժողովրդա-
կան տգէտ մասան որպիսի սրբազան զգաց-
մունքով է նայում գրքին ու նրա ընթեր-
ցողին. հարստանալով, կեանքի դառնութեան
բաժակը մինչեւ վերջը խմած մարդը ինչպիսի
լիակատար վատահոլութեամբ, ինչպիսի
հաւատով դիմում է կրթված մարդուն, ինս-
տիտուտաբար համարելով նրան իր բարեկամը,
համոզված լինելով, որ միայն նրա մօտ կարող
է գտնել կարեկցութիւն, խրախոյս, պաշտպա-
նութիւն: Նոյն իսկ մօնղոլական օրդանների
այն մնացորդները, որոնք դեռ հին պիտու-
թեան եւ կիսավայրենի կարգերի մէջ են մնա-
ցել մինչեւ այժմ, նոյն իսկ նրանք էլ մի ա-
ռանձին յարգանք ենք զգում դէպի «Խոլոյին»,
դէպի դիւր կարգադրող եւ քիչ չեն իրական
եւ աւանդական պատմութիւնների մէջ այն-
պիսի դէպքեր, երբ արեւմտաբուն բռնակալը
կամ զաւան աւագալը խնայել են մարդուն
լոկ այն պատճառով, որ նա կարգադրող, կըրթ-
ված, գիտուն մարդ է: Անշուշտ, մարդու-
թիւնը իր երկար անցեալի մէջ շատ փաստեր
է ունեցել համոզվուել համար, որ գրեթէ մար-
դիկ ճիշդ որ հասարակաց բարեկամներն են,
բարեբար ազդեցութիւն ունեն աշխարհի վրա:
Բայց եթէ թողնելու լինենք երեւոյթի հոգե-
բանութիւնը, եթէ նայելու լինենք աշխարհին,
չենք տեսնի, որ մարդկային ազգի կերպարա-
նափոխութիւնը, նրա ամբողջ զարգը կրթված
մարդկանց գործն է: Մեր ժամանակների
մնացորդ է եւ այն՝ ինչ ապագայի սողմներն
ցոյց տալիս, այն՝ ինչ արդէն անկարող է եւ
այն՝ ինչ ոյժ եւ կորով է խոստանում:

Եւ ահա, երբ Փրանսիացի գեղարուեստական-
գրական գործիչները տեսնում են, որ իրանք
զոհ են գնում իրանց բուրժուազական դասակարգի
բուրժուական հայեացքներին, երբ տեսնում են,
որ գեղարուեստը կապիտալիզմի ճանկերն է
ընկել, եւ իրանց տաղանդը սկսում է սնանկա-
նալ չնորհիւ բուրժուազիայի բարոյական սը-
նակութեան—«գաւաճանում են» իրանց մայր-
դասակարգին (բուրժուազիայի ճաշակը, իդէալ-
ները եւ այլն) եւ անցնում են ապագայ խոս-
տացող դասակարգի բանակը:

Դա իրականութիւն է: Հէնց Փրանսիական
ակադեմիայի անդամներից մէկը, այն ակադէ-
միայի, որ միշտ յետադիմակա՝ բուրժուազիայի
բարոյական պաշտպանն է եղել, Անատոլ Զը-
րանս, այսօր պաշտօնապէս անցել է աշխատա-
ւոր դասակարգի բանակը: Փրանսիայի ամենա-
նորը ստիլիստը, ամենագեղարուեստագէտ բո-
ւանիստներից մէկը, բարոյական անակութեան
վախից զրոյթված այսօր որոնում է իր ոգեւո-
րութիւնը. իր բարոյական անակութեան ու
բուրժուականութեան վերածնունդ աշխատաւոր
դասակարգի իդէալների մէջ:

Ճիշդ է, կան շատ գրական-գեղարուեստա-
կան գործիչներ, որոնք նոյն համարձակու-
թեամբ դեռ յայտնած չեն իրանց դրօշակը եւ

թիւնը իրանց նպատակ է հասարակական
բարեբերի ազնուացման կազան քաղաքում,
ինչպէս հաղորդում է «Вожде. Вѣст.» լրագիրը,
մի բժիշկ յղացել է մի լաւ միտք—խօսեցնել
այն դժբաղդ զոհերին, որոնք դուրս են չլքրու-
ված հասարակութեան միջից եւ ներկայացնում
են միայն ծախու միտ: Նա հարցուփորձի է
ենթարկել 67 ընկած աղջիկներին:

Ստացվեցին հետեւեալ տեղեկութիւնները
նրանց անբարոյականացման մասին. 38 հո-
գի, այսինքն կէսից աւելին, անբարոյակա-
նացվել են մինչեւ 17 տարեկան հասակը,
4-ը 12 տարեկան հասակի մէջ, 4-ը 13,
4-ը 14, 8-ը 15 եւ 15-ը 16 տարեկան հա-
սակում: Այդ ցուցակից երևում է, որ ան-
բարոյականացողները, մեծ մասամբ, եղել են
ինտելիգենտ մարդիկ, ուսանող երիտասար-
դութիւնը եւ այլն: 12 տարեկան 4 աղջիկ-
ներից 3-ին անբարոյականացրել են ինտե-
լիգենտ մարդիկ, որոնք դիմում էին կաւառ
կանանց աշակցութեան: Անբարոյականա-
ցողների ցուցակում կարգում ենք. «Բիւժե-
ներ կաւատի միջոցով», «ուսուցիչ, ծախել է
սօրաքոյրը», 13 տարեկանները տալիս են
նոյնպէս դառն ցուցմունքներ. «ազնուական»,
«ճաշող ուսանող», «գիմնասիստ, արքայից
է», «ուսանող, տանտիրուհու որդին», ար-
քայից է: 14, 15 եւ 16 տարեկանների
վերաբերմամբ կարգում ենք. «Լիցէոնի ու-
սանող», «անասնաբոյժ ուսանող», «կալուա-
ծատէր, հայրն է վաճառող», «ճաշող ուսա-
նող», «գիմնասիստ»: Ցուցակի 59 աղջիկ-
ներից քսան հոգի անբարոյականացել են
ինտելիգենտ մարդկանց ձեռքով, 19 հոգին
վաճառականներն եւ գործակաւորների ձեռ-
քով: Իրանց հասարակական գիրքով աղջիկ-
ները գլխաւորապէս պատկանում են ստորին
դասակարգին, աղաքիներին, որոնց ամե-
նայն եւսանող մնացորդներն էլ են տանտէր
«աղաների» որդիները—գիմնասիստները եւ
այլն:

Պատկերը ինքն ըստ ինքեան չափազանց
պարզ ու պերճախօս է, հասկանալի նոյն իսկ
առանց բացատրութիւնների: Խօսեցրել են մի-
այն մի քաղաքում, խօսեցրել են միայն 67
հոգու: Իսկ այս թիւը որքան աննշան է բիւ-
րաւոր այն անբարոյացողներին մէջ, որոնք
զոհվում են մարդկանց կրեդիտի եւ ապա մոռ-
նում են հասարակութեան համար: Բայց այս
փոքրիկ պատկերը բաւական ուժեղ վկայու-
թիւն է, որ խեղճ, անօգնական երեխաների
անկման պատճառների մէջ առաջնակարգ տեղ

Անատոլ Զըրանսի պէս մի բանակից միւսը դեռ
անցած չեն պաշտօնապէս եւ մինչեւ իսկ մի
տեսակ տատանումների մէջ են,—սակայն ո՞վ
կարող է ներկայումս ասել, որ մի Միքեօ, մի
Էմիլ Զօլա բուրժուազ դասակարգի պաշտպա-
ններն են, քանի որ նրանք մինչեւ զոհանքով
եւ ատելութեամբ ցոյց են տալիս «Ոգեկալը»
դասակարգի անբեղմնաւորութիւնը: Եւ տա-
տանման գլխաւոր պատճառներից մէկն այն է,
որ գեղարուեստագէտները չը գիտեն, թէ ինչ-
պէս է վերաբերվում աշխատաւոր դասակարգը
դէպի գեղարուեստը, ամենայն հետաքրքրու-
թեամբ նրանք ուզում են իմանալ, թէ ինչ
գիրք կը բռնէ իրանց վերաբերմամբ Փրան-
սիայի ընկերակցական կուսակցութիւնը: Զըրա-
նս վաճ գլխաւորապէս տնտեսական կարգերի հար-
ցերով, կը վերադրէ արդեօք սոցիալիզմը մի
որ եւ է հասարակական պիտուհի գեր գեղա-
րուեստին, ուզում է արդեօք ժողովուրդը, այն
ժողովուրդը, որի գլխաւոր հոգին է հացի խն-
դիրը, գեղարուեստի հետ ծանօթանալ, նրան
հասկանալ եւ նրան սիրել... Որ այս հարցերը
հասունացել էին եւ նրանց լուծումը պահանջ էր
զարձել, այդ մեղ ցոյց է տալիս եւ այն, որ
անցեալ ամիս մի քանի նկարիչներ ու գրական
գործիչներ, որոնց մէջ է եւ Ժօրէս, վճռեցին
մի մեծ միջադրարկ համագումար կազմել Պա-
րիզի ցուցահանդէսի օրերում, որտեղ հրաւիր-
ված կը լինեն բոլոր ազգերի գեղարուեստա-
գէտները, բայց նոյնպէս եւ Փրանսիացի մի-
ջանի բանաւորական խմբի ներկայացուցիչնե-
րը. այդ համագումարում պէտք է վճռվեն մի
քանի հարցեր՝ 1) գեղարուեստը եւ իդէօլոգիա,
2) գեղարուեստի ազդեցութիւնը հասարակու-
թեան վրա եւ ընդհակառակը, 3) գեղարուեստը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐԻԶԻՑ

VIII

Մարտի 29-ին, Պարիզի թատրոններից մէկը
բաւական տարօրինակ բնաւորութիւն էր կը-
րում: Նախ թատրոնական պիեսի փոխարէն
արվեստ մի կոնֆէրէնցիա, երկրորդ՝ թատրոնի
հասարակութիւնն էլ կազմված էր գլխաւորա-
պէս ինտելիգենցիայի զանազան խաւերից՝ հա-
մալարանականներից, ուսանողներից եւ մա-
նանաւոր գեղարուեստագէտներից, կոմպոզի-
տորներից, նկարիչներից եւ գրականական զա-
նազան ճիւղերում գործողներից: Կոնֆէրէն-
ցիան «գեղարուեստի» մասին էր իսկ դասա-
խօսն էր հնչակաւոր ժօրէս...

Անշուշտ այն հայ ընթերցողները, որոնք ժօ-
րէսի անտուր լսել են, իբրեւ Փրանսիացի
լայտնի ընկերակցական մասին, մի քիչ պէտք
է զարմանան, որ նոյն ժօրէս ոչ թէ քաղաքա-
կան կամ տնտեսական մի հարց էր արծար-
ծում, այլ իր կոնֆէրէնցիայի նիւթ էր ընտրել
գեղարուեստը, եւ պէտք է խօսէր 2—3 հազար
ընթերցող հասարակութեան առաջ: Եւ իսկա-
պէս, ժօրէսի ընտրած նիւթը մինչեւ այժմ ըն-
դունված եւ սովորութիւն դարձած նիւթերի
կարգից մի քիչ դուրս էր: Սակայն եթէ մի
քիչ խոր թախանցենք հարցի մէջ, կը գտնե-
ք այն երկրակալութեան, որ մի ընկերակցականի
կողմից գեղարուեստի մասին խօսելու ունի իր
փոքրիկ պատմութիւնը եւ հետեւապէս գոյու-
թեան իմաստը:

Մեր նամակներից մէկում մենք ակնարկել
էինք արդէն այն ընտրող եւ հետաքրքիր երե-
ւոյթի վրա, որ Փրանսիական բուրժուազիային
պատկանող ինտելիգենցիան եւ մանաւանդ
բուրժուազ դասակարգին պատկանող գրական
գործիչները մի տեսակ բարոյական ճգնաժամի
մէջ են գտնվում եւ ենթարկված են, այսպէս
ասած, անցողական ժամանակի բոլոր խարխա-
լուեաներին ու տատանումներին:

Ձգված տիրող եւ ներկայապէս ուժեղ բուր-
ժուազիայի շինծու ու կեղծ հասարակական
կեանքից, գգոհ օր օրի վրա աւելացող բարո-
յական անանկութիւնից՝ Փրանսիայում գեղա-
րուեստին ծառայողները կամաց կամաց սկը-
սում են խզել իրանց կապերը բուրժուազիայի
հետ:

Գեղարուեստը, իր կենսունակութիւնը պահ-
պանելու համար, ստիպված է միշտ նոր գեղ-
արուեստական ձևեր ստեղծել, միշտ նոր եւ
նոր, այսինքն սատող իրականութեան համա-
պատասխան իմաստ ու պարունակութիւն ըն-
դունել: Սակայն իրանց քաջի հանել, իրանց
ընդ գտնել գեղարուեստին անհրաժեշտ իդէալ-
ները, ուր գիմել: Վերածնութեան դարերին,
բայց դա կը լինէր մի խիզախ եւ անխաբար-
գործելի քայլ. չէ որ որքան էլ հրաշալի լինէր
իրանց գեղեցիկութեամբ հին յունաց եւ կամ
վերածնութեան հանձարները, բայց նրանք ան-
կարողորդել են ներկայումս հէնց այն հասա-
րակ պատճառները, այդ ոգեւորութեան միջնորդը
գոյութիւն չունի մեր օրերում: Ժամանակները
փոխվել են եւ արդի կեանքը իր զանազան
պայքարներում անձայր եւ միմանց հակադրո-
ւածիցիաներ է տալիս գեղարուեստի ծառայողին:

են բռնում «բնականականները», այսինքն այն մարդիկ, որոնք կրթություն են ստացել, որոնք գրքերի վրա տարիներ են անցկացրել եւ ուրեք, հետեւաբար, պիտի լինէին հէնց այդ խեղճերի պաշտպանները: Անցեալ անգամ «Մը- շակի» մէջ տպուկ մի յօդուած, որ հայ ուսա- նողութեան ճակատին էր խփում այդ զգուշի շահատակութիւնը: Զրպարակի վրա է գրված այն խաղաղասկ իրողութիւնը, որ հայ ուսա- նողն էլ նոյնն է անբարոյականացնողի դե- րուս, ինչ որ ուսն եւ այլազգի ուսանողը: Անա թէ ինչ է տալիս ժամանակակից կրթութիւնը: Էլ ինչեւ ենք զարմանում, որ ուսանողը, հա- մալարանական նստարանի վրա այդպիսի կեղ- տոտութիւնների մէջ վարժվելուց յետոյ, միա- նում է կեանքի մէջ կամ իրրեւ անհոգի կար- երիստ, կամ իրրեւ չազ օժիտի աչք տնկող «տան փեսայ» կամ թէ իրրեւ որ եւ է ոսկու տոպրակի ստոր գեղադայ...

Հարաւային Աֆրիկայում թափվող արեւը շարունակում է այրել մարդկութեան խիղճը եւ այն բնական հարցը՝ թէ ո՞վ եւ ի՞նչպէս պի- տի կանգնեցնել այդ ամօթալի գործը աւելի եւ աւելը հրատապ բնաւորութիւն է ստանում: «Русская Вѣд.» լրագիրը ստացել է մի նամակ, որի մէջ խնդրում են, որ խմբագրութիւնը յայտնէ իր կարծիքը որոշ կերպով:

Փրանսիայի, Ռուսաստանի եւ Գերմանիա- յի միջամտութիւնը—ասում է նամակագի- րը—կազմաւոր բոլորներին այն բռնութիւնից, որ գործ են դնում անգլիայիները նրանց ներքին կեանքի վրա—եւ պէտք է ձգտել որ այդ միջամտութիւնը լինի, պէտք է այդ բանը կրկնել որքան կարելի է յաճախ, թէ եւ դա պատերազմ էլ առաջանէր: իրաւա- դութիւնը մեծ ըստ է, բայց նրանից բարձր է պատերազմը իր երկրի պաշտպանութեան համար, պատերազմը արդարութեան համար: Կասեն, թէ արդարութիւն չը կայ աշխարհի վրա: Զննարկել է, թոյլին, անխնայ ճշն- յում է ուժեղը, գործունեան: Բայց չէ կա- րելի անտարբեր նայել, թէ ինչպէս մի բազ- մամարդ պետութիւն, օգտվելով միմյան իր թակալան գերազանցութիւնից, բռնանում է փոքրիկի վրա: Անկարելի է նախատեսել թէ քանի ժամանակ կը տեւէ այդ պատե- րազմը եւ, ինչպէս երեւում է, միջամտու- թեան այժմ սպասել չէ կարելի: Բայց պէտք է դրա համար հոգ պատրաստել: Դա մա- մուլի մեծ նպատակի պիտի լինի: Եթէ մի- ջամտութիւն լինի մի պատերազմի մէջ, որը ամբողջ աշխարհը համարում է անարդար, դա կը լինի մի քայլ, որ մի աստիճան բարձր կը լինի Հաւաքայի կոնֆերանցից:

Պատասխանելով նամակագրին, լրագիրն ասում է, որ եթէ միջամտութիւնը պիտի ա- ռաջանէ մի նոր, աւելի մեծ պատերազմ պե- տութիւնների մէջ, դա կը լինէր աւելի մեծ չարիք, որի հետեւանքները էլ էլ կարելի նա- րատեսել: Ցանկալի է, որ ներկայ պատերազմը վերջանայ առանց նոր արեւմտեանութեան: Գալով Ռուսաստանին, լրագիրը այն միտքն է յայտնում, որ Ռուսաստանը անցեալ եւ ներկայ դարում շատ անգամ է զոհն միջոցներ եւ ա-

արհեստի եւ արդիւնաբերութեան մէջ: Այդ համագումարից զուցէ ինքն ըստ ինքեան կը ժայթքի գեղարուեստի մի նոր ֆորմուլա, որի սօցիալական եւ փիլիսոփայական նշանակու- թիւնը շատ մեծ կարող է լինել, գոնէ այդպէս են կարծում համագումարի նախաձեռնողները:

Անա այս բոլորը աչքի առաջ ունենալուց յետոյ, մեզ հասկնալի է դառնում եւ մինչեւ իսկ շատ բնական, որ հուշակաւոր Փրանսիացի բնկերվարականը երէկ, մարտի 29-ին, թա- րօնում, Անատոլ Փրանսի նախագահութեամբ, կազմեց գեղարուեստի մասին մի կոնֆերանցիա: Ժօրէսի կոնֆերանցիան իր կուսակից ընկեր- վարականների համար ի հարկէ «նոր խօսք» չէր, մինչեւ իսկ առանց ճշնադատութեան մէջ մտնելու, կարելի է ասել, որ սաստիկ աչ- քի էր ընկնում դասախօսի իղէալիստական տեսակէտը գրականութեան պատմութեան վե- րաբերմամբ, որի պատճառով եւ վիճելի են դառնում գեղարուեստի մասին նրա յայտնած մի քանի կարծիքները: Բայց առհասարակ ներ- կայ եղող հասարակութեան վրա Ժօրէսի կոն- ֆերանցիան մեծ տպաւորութիւն թողել իր բանաստեղծական թռիչքներով եւ մտքի բարձր ելեւեջներով: Պէտք է նկատել, որ կոնֆերան- ցիայի ընտրող նշանակութիւնը հէնց այն բա- նումն է, որ սօցիալիզմը մի անգամ եւս ցոյց տուց, թէ իր ուշադրութիւնը դարձնում է ոչ միայն տնտեսական կամ քաղաքական կեանքի վրա, այլ հասարակական կեանքի եւ միւս գործօնների, մինչեւ իսկ գեղարուեստի վրա: Աւելի եւս. այդ կոնֆերանցիայից երե- ւաց, որ երբ մի վերանորոգիչ դասակարգ սկսում է ցոյց տալ իր պատմական ոյճը՝ նա ստիպ-

ւում այնպիսի նպատակների եւ շահերի հա- մար, որոնք նրանից հետո են եղել: Նա ունի իր սեփական խաղաղ, կուլտուրական գործե- րը, որոնց հետամուտ լինելով, նա կարող է աւելի օգտակար լինել մարդկութեան—եւ այդպէս, ժամանակակից քաղաքակրթված մարդ- կութիւնը վրդովում է կատարվող անարդա- րութիւնից, բայց ոչինչ անել չէ կարողանում, բայց միայն խօսելուց: Իսկ դրանից, ի հարկէ, բռնեւրը ոչ մի օգուտ չեն ստանալ: Երեւի Զեմլերշեյները լաւ գիտեն այս տխուր իրո- ղութիւնը եւ այդ պատճառով են այնքան յան- դուգն ու յամուտ:

ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ՎԵՍՍՎԱՍԵՆԻՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի երկրաչարժից վը- նաւածները օգտին:

Թիֆլիսից՝ բժ. Ալեքսանդր Ուստրաւսկից 15 բուլբի:

Ուր կօվից՝ Լ. Մէլքե-Օհանջանեանից 10 բուլբի, որ հաւաքված է ուսանողների մէջ: Մեծ-Սարուի գիւղից (Ջրանշիրի գաւառ) գիւղի դպրոցի աւագ ուսուցչի միջոցով հա- ւաքած 50 բուլբի: Նուիրատուներն են. Ու- սուլմարանի աշակերտներից 5 բ. 70 կ., Ն. ք. Մարգարեան, Ա. Միքայիլեան, Յ. Գրիգորեան —2 բ., Տիլիմանի 3 բ. 26 կ., Բ. Զաքարեան, Վ. Յակոբեան, Բ. Գրիգորեան, Ա. իրաչատու- րեան, Շ. Աստատուրեան, Բ. Գրիգորեան, Կ. Դանիելեան, Հ. Սահակեան, Ս. Յովսէփեան, Փ. Յարութիւնեան, Ս. Աւանան, Թ. ք. Տէր- կարապետեան, Ա. Յարութիւնեան—1-ական բ., Պ. Գրիգորեան 60 կ., Ա. Արդուսեան, Ս. Յարութիւնեան, Մ. Դանիելեան, Ա. Յա- րութիւնեան, Մ., Ա., Մ. Գրիգորեաններ, Մ. Առաքելեան, Մ. Յարութիւնեան, Կ., Լ. Թիւնեաններ, Ս. Թիւնեաններ, Ա.-բէկ Գա- լաշով, Ս. Յարութիւնեան, Հ. Օհանջան, Հ. Աւանան, Է. Արդուսեան, Մ. Զանիւսեան, Հ. Մարտիրոսեան, Ա. Աւանան, ի. Աւա- դեան, Ի. Գրիգորեան—50-ական կ., Ե. Արք- հանով, Մ. Գրիգորեան, Անյայտ, Դ., Ա. Ուսուցիչներ, Ա. Դուլիսեան, Զ. Բարսեան, Ա. Գրիգորեան, Է. Արիւթիւնեան—40-ական կ., Դ. Բարսեան 30 կ., Մ. Նարայեան, Յ. Գալուսեան, Գ. Աստատուրեան, Գ. Մարգի- սեան—25-ական կ., Յ. Արդուսեան, Ա. Շաթիրեան, Ս. Յարութիւնեան, Հ. Մարգի- սեան, Դ. Հարապեան, ի. Վանիսեան, Բ. Մարտիրոսեան, Հ. Բարսեան, Բ. Գալու- տեան, Զ. Գալուսեան, Ա. Հարապեան, Ա. Գրիգորեան, Ա. Գալուսեան, Հ. Աւանան, Պ. Հարապեան, Ո. Մարգարեան, Յ. Օսէ- փեան, Ա. Մարգարեան, Գ. Մարգարեան, Գ. Առաքելեան, Գ. Պետրոսեան, Ս. Յարութիւ- նեան—20-ական կ., Մ. Առաքելեան, Թ. Գրի- ցորեան, Ե. Առաքելեան, Ե. Գրիգորեան, Ա. Ուսանեան—15-ական կ., Զ. Աստատուրեան, Գ. Դարբեան, Պ. իրաչատուրեան, Բ. Շիրի- նեան, Ա. Աւանան—10-ական կ., ի. Սահա- կեան, Լ. Զանիւսեան—5-ական կողէկ (Հանված է ծանուցարանածայն 44 կ.):

Դարասու-Բազարից՝ ուսուցչի Յ. Ար- րանմանից 36 բուլբի 25 կողէկ: Նուիրա- տուներն են. Մ. Եղապեան 5 բ., Յ. Պենկե- րեան 3 բ., տ. Մ. Կարապետ, Ն. Վ., պ. Յ. Պարսեան—2-ական բ., օր. օր. Բ. Կարապետ, Վ. Զատիկեան, Ն. Եղապետ, Ա. Բ., Ա. Մե-

ված է ունենալ հասարակական ամեն մի ե- րեւոյթի առթիւ իր սեփական, դասակար- ցային տեսակէտը. անխուսափելի կերպով նա ստիպված է ասել իր խօսքը, ցոյց տալ ու պարզել իր հաղեցքները եւ բարոյագէտ ընդ- գրկել մարդկային կեանքի բոլոր կողմերը:

Ժօրէսի կոնֆերանցիան, որ կայացել էր Պարի- ժի մի քանի գեղարուեստական շրջանների ջանկութեամբ, իրրեւ արտայայտութիւն մի ընկերվարականի կարծիքների գեղարուեստի մասին. երկու չարաթից յետոյ լայն կը տեսնէ ա- ռանձին հրատարակութեամբ, երբ մենք էլ հե- տեւապէս առթիւ կունենանք աւելի մանրամասն խօսելու դրա մասին: Այսօր բերում ենք այս- տեղ, ամենահամառօտ կերպով, դասախօսու- թեան էական կէտերը:

«Մենք ապրում ենք բուրժուազիայի ստեղ- ծադրծութեան վերջին շրջանում, այդպէս է սկսում Ժօրէս. նրա գեղարուեստական աղբիւ- րը արդէն սկսում է ցամաքել եւ եթէ դուք, գեղարուեստագէտներդ, փնտում էք գեղա- րուեստի նոր ձեւեր, կարող էք նրանց գտնել միայն վերածննդ կեանքում. գեղարուեստա- կան նոր մղումները կարելի է սպասել միայն սօցիալական վերանորոգումից. եւ այդտեղ դուք աւելի ապահով կը տեսնէք ձեր հանձա- րի արդիւնքները, քան թէ ներկայումս Գե- ղարուեստական երկերը կը լինեն ընդհանուր, ազգային սեփականութիւն եւ ամեն ոք կը կարողանայ այդ երկերով հիանալ, հակառակ ներկայ մենավաճառութեան, որի մէջ գեղա- րուեստը ծառայելով միայն առանձնաշնորհված- ներին, կորցնում է իր ամբողջ վեհ եւ ազնիւ նշանակութիւնը ու դերը: Վերջին հարկեր,

չենո, տ. Ե. Բաշանով, Մերեքայ. Դ. Դե- կրմանեան, պ. Ն. Ն. Ա. Գաղաթեան, Յ. Մարգարեան, Ն. Petridis, Բ. Գլեբով, Ե. Կոնդարակ, Մ. Կոնչնեով, Լ. Իվանով, Ա. Կալինին, Մ. Դյուլաշեւ, Ե. Կարապետեան— 1-ական բ., տ. Ա. Վոլչանեքայ 25 կողէկ:

Ընդամենը 111 բուլբի 25 կողէկ: Մինչեւ այժմ ստացել ենք 34,519 բուլբ. 40¹/₂ կողէկ, երեք ոսկի ուսուցիչ եւ 50 խաղա- կան լիւրա Ուղարկել ենք 32,000 բուլբ. 3 ոսկի ուսուցիչ եւ 50 խաղական լիւրա: Երէկ յանձնեցինք Թիֆլիսի գլխաւոր կոմիտեան 2000 բուլբի: Մեզ մօտ մնում է 519 բ. 40¹/₂ կողէկ:

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒԹՅ

Ապրիլի 16-ին

Մանկական հիւանդանոց ունենալու խնդիրը շատ ժամանակ չէ, որ յարուբված է այստեղ. բն- դամենը երկու, երեք տարվայ անցեալ ունի նա: Յիշում ենք—ինչպէս վիճում էին բժիշկները այդ խնդրի վերաբերմամբ. նրանցից մի քանիսը գտնում էին, որ «մանկական հիւանդանոց» իրրեւ առանձին, անկախ հիմնարկութիւն, կա- րիք չը կայ ունենալու եւ պատճառարանում էին ոչ թէ նրանով, որ առհասարակ հիւանդ մա- նուկներ քիչ կան—ի հարկէ ծիծաղելի կը լինէր այդպէս պնդելը—այլ նրանով թէ դրա- մի պակասութիւն կայ մէջտեղ. եւ որով- հետեւ մտադրութիւն կար այդ հիմնար- կութիւնը էլ քաղաքի չնքան փաթկալով, ա- ստիներ եղան, թէ քաղաքը առանց այն էլ ծանրաբեռնված է զանազան, ոչ պակաս կարեւոր ծախսերով եւ չէ կարող պահել հի- ւանդանոց իրրեւ առանձին հիմնարկութիւն: Սակայն կարելի էր—պնդում էին մի քանիսը— բացվել հիւանդանոցը համարել իրրեւ քաղա- քային մեծ հիւանդանոցի մի մասը: Եւ այս բոլոր վիճարանութիւնների աղբիւրը հիւան- դանոցի նիւթական էր միայն:

Այսպէս մի ամենակարեւոր հիմնարկութիւն ունենալու խնդիրը, ինչպիսին է «մանկական հիւանդանոց», երեք թէ չորս տարի մնաց հրապարակի վրա դրված անուշելի, գլխա- ւորապէս փողի պակասութեան պատճա- րով, այն էլ Բագուի պէս մի ոսկի տոպրա- կում... Գաղաթեանի վարչութիւնը գուցէ հիմ- նաւոր, յարգելի պատճառ ունէր խնդրին բն- թացք չը տալու. սակայն հասարակութեան անտարբերութիւնը ինչով բացատրելի ներանով արդեօք, որ «մանկական հիւանդանոց», զուտ մարդասիրական հիմնարկութիւն լինելով, մի- միայն ծախքեր է պահանջում, եւ փոխարէնը «տակի» չէ տալիս, այլ միայն հարկաւոր «ա- ռողջացած մանուկներ», որոնք տանեակ տա- րիներ շարունակում են միայն «մեռած դրամա- գլուխ»—իսկ մեռած դրամագլուխ հետ գործնա- կան եւ ամեն բանի արժէքը դրամով չափող բազուցին գործ չունի... Բայց չէ որ սրանք արդէն հրէշաւոր պատճառարանութիւններ են եւ վայել միայն այն հասարակութեան, որի

հարկեր քանի տարվայ ընթացքում գեղա- րուեստը զանազան ձեւեր ընդունելով, մի եւ նոյն ժամանակ, գլխաւորապէս անհատական ոգի էր կրում. կարծես նա միշտ ասում էր, որ ամեն մարդ պէտք է ապրէ իրանով եւ իր համար. ահա թէ ինչու մեր դարի գեղարուես- տը միշտ իրանաւոր եւ քառապլին է եղել, մի եւ նոյն ժամանակ անհանգիստ եւ սին. չը կայ գեղարուեստական երկերի մէջ ներդաշ- նակութիւն եւ միութիւն, որովհետեւ չը կայ մի իղէա, որը բոլոր մարդկանց ձօնեցնէր մի- մեանց եւ որը թոյլ տար գեղարուեստական երկին ներդաշնակել մարդկութեան բոլոր մը- ղումները ու ձգտումները:

«Միջին դարերի գեղարուեստը տողորված էր մի ընդհանուր կրօնական գաղափարով, բայց դուք շատ լաւ գիտէք, ասում է Ժօրէս, որ զեռ անցեալ դարում ծնունդ առնող գիտու- թեան առաջ կրօնական փայլը ընդմիջող մարեց: «Միայն ուրեմն մարդկական գաղափարը, որով միայն եւ կարելի կը լինէր առաջնորդ- վել գեղարուեստի մէջ: Բայց մարդկութիւնը խիստ բաժանված է եւ ներկայումս կան «մարդկութիւն» եւ «մարդ», որոնք միմեանց պա- րիս ամենամեծ հանձնարը Գեօթէն անկարող էր գեղարուեստի մէջ մտնել իր օրոնած ներդաշնակութիւնը, ահա թէ ինչու նա անկարող եղաւ մարդկանց ներշնչել կեանքի միութիւն. տեսէք ինչպէս նրա հասկացողու- թիւնը մարդկային կեանքի մասին անտուր է եւ մութ. եւ նոյնը տեսնում ենք վիկտոր Հիւ- գօի եւ ուրիշների մօտ:

«Ներկայումս, չը նայած որ աշխատուոր

երակների մէջ արեւան փոխարէն հոսում է ինչ որ անգղիս հեղուկ, որի սրտի մէջ չը կայ բարձր, մարդասիրական զգացմունք, որի մէջ մեռած է մերձաւորին օգնելու վեհ գաղափարը:

Այսօր ուրախ ենք արձանագրելու մի վերին աստիճանի համակրելի փաստ. պ. Յովսէփ Թումայեան նուիրում է քառասուն հազար բուլբի Բագու «մանկական հիւանդանոց» կառուցանելու: Պ. Թումայեանի նուէրը այն- չափ մեծ է բարոյական տեսակէտից, որ հա- զարաւոր մանուկների թոթովանքը՝ խառն խ- րանց անձար ծնողների բարեմայթութիւնների հետ, ուղարկում են ութսունամեայ ծերունուն իրանց անկեղծ յարգանքները: Սրանցից աւե- լին տալ նրանք անկարող են:

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒԹՅ

Ապրիլի 15-ին

Ամսիս 10-ին, Մեռելոցի օրը, այստեղի հայ թատերաւէրների խումբը իր ծախսով կանդ- նեցրեց մի մի համեստ մահարձան Սմբատ Կա- րինեանի եւ տ. Աշխէն Սօջաթումեանների գերեզմանների վրա: Նախ հոգեհանգիստ կա- տարվեց եւ ապա պ. Գ. Գրիգորեանցը մի քա- նի խօսքով ներկայ հանդիսականներին բա- ցատրեց Ս. Կարինեանցի եւ տ. Աշխէնի գոր- ծունէութիւնը: Պարոնի խօսքից երեւաց, որ Ս. Կարինեանը ութսունական թուականներից սկսած սիրել է թատրօնը ու նրա համար ե- ռանդով աշխատել է. որտեղ որ իղել է, ոչ մի ջանք չէ խնայել օգնելու այնտեղի սիրողներին, ըստ իր կարողութեան, իսկ տ. Աշխէնի մասին ասաց, որ նրա գործունէութիւնը աւելի կար- ճատեւ է եղել, բայց նա վերցրել էր իր վրա աւելի ծանր պարտականութիւն, այսինքն ընդ գուրա գալ եւ ենթարկվել հասարակութեան քննադատութեան: Առաջին անգամ խումբը կազմակերպվիս՝ նա, դեռ օրիորդ, յանձն ա- ռաւ ուրախութեամբ մասնակցելու. ներկայա- ցուններին եւ յետոյ նրա օրինակից խրախու- սելով, սկսել են մասնակցել եւ ուրիշները: Այդպիսով հիմք է դրվել թատերաւէրների տե- րական մշտական խմբին:

Պ. Գրիգորեանից յետոյ հայր Մեռեանցը եւս մի քանի խօսք խօսեց՝ գովելով հանգուցեալ- ների գործունէութիւնը եւ հրաւեր կարդաց հասարակութեան սիրել թատրօն, որովհետեւ այնտեղ կանոնում ենք կեանքի ճիշդ պատկեր- ները: Նա խօսքը դարձրեց կանանց՝ աակրով: «Թողէք զարդը, պաճուճանքը, նորաձեւութիւ- նը, եւ սկսեցէք գործել, առաջադիմել եւ վեր- ջապէս հետեւեցէք տ. Աշխէնի օրինակին, որ ոտնատակ տալով ամեն մի բամբասանք, առաջ տարաւ հասարակական գործը»: Ապա խմբի ան- դամ պ. Լ. Էլիզարեանցը խմբի ներկայ նա- յաններին բարձանց տ. Աշխէնի եւ պ. Կա- րինեանի պատկերները եւ այդպիսով վերջա- ցաւ այդ անշուք հանդէսը:

Ի դէպ. այստեղ սովորութիւն է, որ Մեռե-

դասակարգի մէջ էլ նկատվում է շատ անգամ գեղեցիկ գաղափարը, բայց չնորհիւ իր անա- պահով եւ տնտեսապէս ստուրկ դրութեան, նա չէ կարող այնքան բարձրանալ, որ հասկանար եւ սիրէր գեղարուեստը: Ո՞ր դիւղացու սիրող կարող է զգացվել գեղարուեստական երկից, եթէ այս պիւղապին միջինն իր սիրտը խը- ված է հողի մէջ. ինչ գեղարուեստ այն գոր- ծարանական բանորի համար, որի ականջը խլանում է անգլանների աղմուկից եւ որի միակ հոգան է, թէ ինքը կը լինի վաղն ան- գործ, հետեւապէս քաղցած իր ընտանիքի հետ: Ինչպէս ուզում ենք, որ ներկայ պայմաններում նրանք այնքան բարձրանան իրանց պատրիկա- կեանքի մակերեւոյթից, որ հասնեն մինչեւ գեղարուեստի գեղեցկութիւնները եւ իրանք էլ ստեղծեն գեղարուեստական երկեր: Կեանքի աւելի արդար պայմաններում, ձեր առաջ, գեղարուեստագէտներ, մենք կը դնենք ամբողջ մարդկութիւնը եւ դուք կը տեսնէք մարդկու- թեան գեղարուեստը, բայց մի կարճել, քաղա- կանչում է ժողովրդական արիւնքը, որ մինչ այդ՝ մենք յետաձգում ենք գեղարուեստական նոր ձգտումները. չէք նկատում, որ սօցիալիզմն արդէն ազդում է գեղարուեստի վրա, որովհե- տեւ ազդում է կեանքի վրա, որի արտացո- լումն է միայն գեղարուեստը:

Խօսելով այնուհետեւ բոմանտիզմի, մի քանի նկարիչների, կոմպոզիտորների եւ բոմանտիս- տների մասին՝ Ժօրէս առաջարկում է գեղա- րուեստին ծառայողներին ըմբռնել աշխատաւոր դասակարգի ձգտումները եւ միանալ նրա հետ:

Ռ. Բ.

լոյր երկուշաբթի օրը մեծ բազմութիւն է հաւաքուած գերեզմանատանը: Կատարուեալ են հոգեհանգիստ, իսկ վերջը նստում քէֆի: Այս տարի էլ այդ նոյն սովորութիւնը կրկնվեց, չը նայած որ շուրջ էր տարածվել, թէ քէֆը պիտի արգելվի: Չը նայած որ քահանաները շատ անգամ խօսել են դրա մասին, բայց ո՛վ է լսողը: Երբ գինին իր ազդեցութիւնն է անում, այն ժամանակ դաշտները եւ ատրճանակները են դուրս գալիս եւ շատ անկարգութիւններ, երբեմն նոյն իսկ զոհեր են լինում: Այս տարի մի քանի արեւելեան աղայ զոհվեց իր անզուգուծութեանը: Լաւ էր, որ ոստիկաններ կային եւ շատ ու շատ անկարգութիւնների արգելք հանդիսացան: Մեր ժողովուրդը սովոր չէ օրինաւոր պահել իրան առանց ոստիկանի հսկողութեան:

Յ. Մակարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ բազմեցի վաճառական էնովք Բուդապեշտ, որ նորերում վախճանվեց Օդեսայում, իր անազն կարողութիւնը կտակել է յօգուտ գանազան բարեգործական ինիմարկութիւններին:

Գիւղատնտեսների այն ընկերակցութիւնը, որ հիմնվել է Գորու գաւառում, իր գործերը շարունակում է տանել աղող կերպով: Մեզ ուղարկած տեղեկագրից երևում է, որ անցեալ 1899 թիւին նա հասցրել է չրջանադարձութիւնը 204,666 րուբլի 29 կոպէկ գումարի, մինչդեռ նախընթաց 1898 թիւին նա հասնում էր 141,881 ր. 17 կոպէկի: Ընկերակցութիւնը բացել է բաժանմունքներ թիֆլիսում եւ կիսովի ու Բրեստի գիւղերում: Պետական բանկը բացել է երեք հազար, Առեւտրական բանկը չորս հազար րուբլու կրէդիտ, իսկ Ագով-Դոնի բանկը անկել է ընդունել ընկերակցութեան մուրհակները: Ձինուորական վարչութիւնը կապալով է տուել ընկերակցութեանը ցորենի եւ գարու կապալները եւ առհասարակ մեծացել է ընկերակցութեան կրեդիտը: Ներկայ ամսի վերջին, ապրիլի 30-ին, նշանակված է ընկերակցութեան տարեկան ընդհանուր ժողովը, որտեղ կը կարգադրվի ընկերակցութեան գործունէութեան հաշիւը, կը քննվեն վարչութեան առաջարկները ընկերակցութեան գրառական միջոցներն աւելացնելու համար եւ տեղի կունենան պաշտօնատար անձանց ընտրութիւնները:

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօր Ե. Մեդվեդովի նախաձեռնութեամբ շուտով Կարաեաղի փորձնական կայարանում կը բացվի բանուորների դպրոց, որտեղ կայարանի բանուորները կը սովորեն գործնականապէս Կարաեաղի տնտեսութեան ճիւղերը: մասնագէտ ղեկավարների հըս-կողութեան տակ:

Պրոֆէսոր Վ. Դոկուչանով, որ անցեալ 1899 թիւին իր երկու օգնականների՝ Ա. Մեչլերովի եւ Ա. Նաբոկինի՝ հետ կատարեց Կովկասում ճանապարհորդութիւն եւ ուսումնասիրեց մեր երկրի հողերը, հրատարակել է մի գեղեցիկ եւ հետաքոտութեան մասին: Դոկուչանով համարում է այդ աշխատանքը իբրեւ մի նախաբան ապագայ աւելի մանրամասն ուսումնասիրութիւնների համար, երբ կատարված կը լինեն մի շարք քիմիական քննութիւններ եւ ճիշդ որոշված կը լինի հողի բաղադրութիւնը: Զեկուցումը կրում է՝ «Предварительный опытъ изслѣдованія на Кавказѣ лѣтомъ 1899 года» վերնագրով: Նա արտատպված է Կապեբակեան աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնի հրատարակութիւնների վերջին կառույցի եւ բաղկայած է միջին դիրքով 32 երեսից:

Մեզ խնդրում են յայտնել, որ վաղը, ուրբաթ, ապրիլի 21-ին, նշանակված է Կովկասեան Դիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, որի քննութեան առարկան կը լինի Ս. Չալաբեանի գեղեցիկումը 1899 թիւի բերքի մասին Կովկասում: Նիստին կարող են ներկայ լինել եւ կողմնակի անձինք:

Ապրիլի 18-ին, Անդրկովկասեան երկաթուղու երկույնան գնացքով թիֆլիս եկա Պետերբուրգի պարսկական դեսպան Էմիր-Թու-ման-Աբու-Նասիմ-խանը: Դեսպանը թիֆլիսից գնալու է Ջուլֆա՝ Շահին գիմաւորելու եւ ուղեկցելու նրան Եւրօպայում կատարելիք ճանապարհորդութեան ժամանակ:

Պրոֆէսոր Մ. Ս. Ջերնովի նախաձեռնութեամբ, Մոսկվայում կազմվում է մի ընկերութիւն, որի նպատակն է սանատորիաներ հիմնել Էստէնտուկում սակաւ կարողութեան տէր մարդկանց համար: Ընկերութիւնը պէտք է պահէ օրինակելի կացարաններ իրանց բոլոր յարմարութիւններով, անայնի ճաշով եւ այլն: Հիւանդներից ստացված վճարը պէտք է ծածկէ միայն ուսուցիչի, ծառաների եւ բնակարաններ իր կարկատանի ծախքը:

ՓՕԹԻՒՅ մեզ գրում են. «Դատաւարների անտարբերութիւն է տիրում մեր քաղաքի հայ հասարակութեան մէջ. վաղուց գոյութիւն ունեցող մեր միակ փայտաշէն փողբիկ եկեղեցին, որ ժամանակի ընթացքում կառուցվել եւ պահպանվել է թէ տեղացի եւ թէ ժամանակաւոր բնակիչոց հայերից, այսօր կատարեալ անուշադրութեան է մատնված: Տոն օրերին ժողովուրդը երկեղով է մտնում եկեղեցին, վախենալով փլկելուց, որովհետեւ յատակի գերաններից եւ կոճերից շատերը փոխել են եւ ի նկատի պէտք է ունենալ, որ գմբէթի անգղիս ծառերով շինուած է այդ գերանների վրա եւ հետեւապէս փորձանքը միշտ աչքի առաջ պիտի ունենալ: Նոյն իսկ պատահել է այսպիսի մի դէպք. — մի քանի տարի առաջ, երբ Վենափառ Կաթողիկոսը, այստեղով անցնելիս, եկեղեցում քարոզ էր խօսում եւ անազն բազմութիւն լցված էր եկեղեցին՝ այդ միջոցին կանանց կողմից յատակն իջաւ, բարձրացնելով ժողովուրդի մէջ սարսափ եւ աղմուկ. բարեբաղդաբար, այդ դէպքն անվնաս անցաւ. բայց դա չէ նըշանակում, թէ միշտ այդպէս կը լինի ժամանակ է, որ հասարակութիւնը մտածէ այդ մասին. փորձնակ մէկը միւսին մատնացոյց անելու, հարկաւոր է գործին գիտակցաբար վերաբերվել: Գումարելով ծխական ժողով, պէտք է ընտրել մի յանձնաժողով՝ օրինական ձեւով ժողովարարութիւն անելու քաղաքի մէջ: Հայերն առանց եկեղեցի չեն կարող մնալ, այդ յայտնի ճշմարտութիւն է, որովհետեւ բացի ընտանիք ունեցողներից՝ 300-ի չափ էլ աշխատաւոր մշակներ կան»:

ԽԱՐԿՎՈՒՅ մեզ գրում են. «Այս տարի այստեղի գործերի մէջ գտնվում են մօտ 150 հայ զինուորներ: Ստանալով թոյլտուութիւն տեղիս զինուորական իշխանութիւնից, այստեղի հողերը Կովկասի մէկը բերել է տուել զուր-նա, դժօր, դուղուկ եւ կինսոյի հազուադէպ ընծայել զինուորներին, որոնք ամեն շաբաթ օր պարապմունքներից յետոյ՝ ուրախ ժամանակ են անցկացնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Արգայի դուքսը, որ մօտ օրերումս վախճանվեց Լոնդոնում, քաջ ծանօթ է նաեւ մեզ իր գործունէութեամբ յօդուտ թիւրքաշայկերի: Նա ծնվել էր 1823 թիւին եւ 1844-ին ժողանգեղով Զօրից դուքսի տիտղոսը՝ նշանաւոր դիրք էր բռնել շաղկապական ազնուականների շարքում: Դիւ երեսնամեայ հասակում ազատամարտի միջնորդութեան մէջ նա ստացաւ գաղտնի կնիք պահողի բարձր պաշտօնը, որից յետոյ հետեւողաբար վարում էր պետական փոստերի գլխաւոր կառավարչի, Հնդկաստանի ստաւ-սեկրետարի եւ այլ պաշտօններ: 1880 թիւին, Գլադստօնի մինիստրութեան մէջ, նա նորից յանձն առաւ գաղտնի կնիք պահողի պօստից: Բայց մի տարի յետոյ, անհամաձայն լինելով Գլադստօնի իրաւաբանական քաղաքականութեանը՝ դուքս եկաւ մինիստրութեանից: Բայց քաղաքականութիւնից՝ հանդու-ցեալ դուքսը պարապում էր նաեւ գրականութեան եւ գիտութիւնների: Նրա գրական աշխատութիւնները վերաբերում են մարդկային մտքի բազմազան ճիւղերին: —Ըրօնի փիլի-սոփայութեան, եկեղեցական պատմութեան, մարդաբանութեան եւ բնական պատմութեան: Արգայի դուքսը եղել է գաղտնի խորհրդի անդամ, բրիտանական թանգարանի կառավարիչ, Գլադստօնի համալսարանի ընկալոր, Լոնդոնի երկրաբանական ընկերութեան նախագահ եւ վարել է ուրիշ այդ տեսակ պաշտօններ: Նրա

աւագ որդին, դքսական տիտղոսի ժառանգը, մինչեւ այժմ կոչվում էր մարկիզ Լօրն: Նա 1871 թիւից ամուսնացած է Վիկտորիա Թա-գուհու աղջկայ՝ իշխանուհի Լուիզայի հետ եւ յայտնի է որպէս բանաստեղծ ու գրականագէտ:

—«Münch. Allg. Zeit.» հաղորդում է, թէ Գերմանիայից եւ Ռուսաստանից յետոյ՝ Թիւրքիայում երկաթուղային արտօնութիւններ ստանալու հերթը հասել է Պրանսիային: Պրանսիական կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է երկաթուղային կոնցեսիա ստանալ Ատրիքում եւ, ըստ երեւոյթին, Պրանսիայի ցանկութիւնը, որ պաշտպանութիւն է գտնում Ռուսաստանի կողմից, մօտ է իրագործման: «Manchester Guardian» ասում է, թէ սուլթանը վճել է երկաթուղի չինկ Դանասկոսից Մեքքա նրա համար, որ ուխտաւորներին ազատէ ծովային ճանապարհորդութիւնից եւ ընդհանրապէս հեշտացնէ ուղեգնացութիւնը դէպի Մահադի դաքարանը: Ծանապարհը պէտք է չինեն զինուորները, իսկ միջոցներն եւ նիւթեղէնը պէտք է հայթայթէ թիւրքական գանձարանը: Բոլորի կարծիքով՝ երկաթուղու նոր գիծը շատ շահաւէտ կը լինի եւ նրա չինութիւնը առանձին գիտարութիւնների չի հանդիպի: Թիւրքերի համար աննկատելի չանցանային հեշտուղիներ եւ արագապարհներ, որոնցով չինվեց Սուլթանի երկաթուղին: Ասում են, թէ հէնց այդ հանգամանքը վճական ազդեցութիւն է գործել Սուլթանի վրա Դանասկոսից Մեքքա երկաթուղի չինելու հարցում:

—«Journal des Débats» հաղորդում է, թէ Պեկինից ստացած տեղեկութիւններին նայելով՝ յետադիմական կուսակցութիւնը այնտեղ լիակատար յաղթութիւն է տարել: Այդ երեւում է բաղմունի ձեւերակալութիւններից, որոնք տեղի են ունեցել մօտ օրերումս: Երկու պալատական ծառայողներ, Չին-Պեկին եւ Ուէնգ-Տուե-Պո, նոյնպէս եւ Սանգ-Չու կայսեր նախկին դատաւարակ ձեւերակալված են եւ, ինչպէս ասում են, կը դատաւարարվեն մահվան պատժի: Շանխայում ձեւերակալված են մի քանի չինացի ժուրնալիստներ, որոնց յօդուածները դուր չէին գալիս կայսրուհին: —Ինքնամա-կալուհուն: Ամեն տեղ գաղտնի ընկերութիւններ են կազմվում եւ հիմք կալ կարծելու, որ երիտասարդ կայսրի մահվանից յետոյ բացարձակ պապամարտութիւնն անխուսափելի կը դառնայ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅ

18 ապրիլի
ՄՈՍԿՎԱ: Այսօր Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, Մեծ-Իշխան Սերգի Ալեք-սանդրովիչ իր Ամուսնու հետ այցելեցին Ներ-րորդութեան Սերգիեւսկի տաճարը:

ՊԱՐԻՉ: Լուբէ ուղարկեց իր թիկնապահ-ներից մէկին այցելելու կամրջի կործանվելուց վնասվածներին եւ նպաստներ բաժանելու նըրանց: Յուցահանդէսում գտնվող մի քանի զուարճութեան տեղեր, որոնք բաւականաչափ ապահով չէին, փակված են, Մայիսի 1-ը անց-նում է հանգիստ. բանուորները չեն դադարեց-րել պարապմունքը:

ԼՈՆԴՈՆ: Բօքսերոս հաղորդում է Բլումֆօն-տէնից. «Շաբաթ եւ կիրակի օրերում բօք-սները յամառութեամբ յարձակումն էին գոր-ծում Տաբանչուի վրա, բայց Բենդի գիվիդիա-նի դիրքը շատ ուժեղ է: Բենդին օգնում են Պրենչի հրամանատարական տակ գտնվող Գօրգոնի եւ Դիկսոնի հեծեալ բրիգադները, Դօրրիէնի հետեւակ զիվիդիան եւ Համիլտօնի հեծեալ զօրաբաժինը»:

Առաւօտեան լրագրներում հրատարակված է մի հեռագիր Կապիտալից, թէ երէկ նորից հրացանազարկ է արած մի գերի, որ փորձում էր փախել Դրինսպոլտի մօտ գտնվող գերիսե-րի բանակատեղից:

«Times»-ին հաղորդում են Բլումֆօնտէնից, թէ այնտեղ գտնված է մի գաղտնի թշնամա-կան ընկերութիւն բազմաթիւ անդամներով, որ հաղորդակցութիւն էր պահպանում բօքսե-րի հետ եւ զէնք էր մատակարարում նրանց: հարեւան ապարանատեղերի ձեռքով, մանրա-մասն տեղեկութիւններ տալով թշնամուն անգ-լիացիների շարժումների մասին աղանչների փոստի եւ հեծեալ սուրհանդակների միջոցով: Այժմ ոչ ոքի հրաման չէ տրվում մտնել քա-ղաք կամ դուրս գնալ այնտեղից:

ԿԻՄԲԵՐԼԷՅ: Վինձորօնից հաղորդում են, թէ բօքսերի զօրաբաժինը յարձակումն գոր-ծեց մի գիւղի վրա եւ գերի տարաւ հիւրա-նոցի տիրոջն եւ ուրիշ երկուսի:

ՄԱՍՍԵՐՈՒ: Բօքսերի անկանոն նահանջը շարունակվում է Բրիտանական հօր զօրա-բաժինը, որ աղտուցվեց Կեպիները, նորից մաքրեց այդ տեղը թշնամիներից:

ՏԱՐԱՆՁՈՒ: Երէկ բօքսերը վճական թեւա-կողմնային յարձակումն գործեցին լոնդային անցքը գրաւելու եւ սալախումբը գերելու համար: —Պրենչի իսկոյն յարձակվեց թշնամու:

Թեւի վրա եւ գօրծեր ուղարկեց լոնդոնը, ո-րոնք այդ տեղում խիստ դառնիկ են: Մուլթը հնարաւորութիւն տուեց բօքսերին յետ քաշ-վելու: Բօքսերի դիրքը այստեղ համարեա բո-լորովին անմասնելի է. լոնդոնը, որոնք այս-տեղ աւելի թեւ են, քան Կօլքեթի մօտ, ձգվում են ամբողջ մղոններ: Քաղաքի շուրջը զրոյթներ մնում է անփոփոխ: Ամբողջ օրը տեղի էր ունենում թնդանօթային կոխ: Հա-միլտօնի զօրաբաժինը առաջ գնաց դէպի հիւ-սիս-արեւմուտք, որպէս զի գտնի թշնամու դիր-քը, որ թնդանօթ է արձակում շատ հեռուից:

ԻՕԿՉԱՄԱ: Երէկ կայսրը ներկայ էր 36 պատերազմական նաւերի զօրահանդէսին: Անու-լից ստացած տեղեկութիւններով՝ Կօլքեթի կա-ռավարութիւնը մերժեց Ամերիկայի պահանջը հանքերի մշակութեան երեք կօնցէստիաների վերաբերմամբ:

ԲՈՒԴԱ-ՊԵՇԵ: Երէկ կօնֆէրէնցիայում վըս-տահութիւն յայտնվեց մինիստր-նախագահ Ալե-լին:

Ապրիլի 19

ՊԱՐԻՉ: Լուբէ մինիստրների, դեսպանների եւ օտարերկրեայ գործակալների ներկայու-թեամբ բացեց այսօր Նիւսեան դաշտերում գե-ղարուհետական ցուցահանդէսը: Ռուսաց գե-ղարուհետ բաժնում հանրապետութեան նա-խագահին դիմաւորեց իշխան Ուրուսով:

Սենայի պրէֆէկտը, իր զեկուցման մէջ ցու-ցահանդէսում պատահած դժբաղդ դէպքի վե-րաբերմամբ, ասում է, թէ երկնակամարի տե-սարանի կառավարիչը կիրակի օրը, առանց թոյլտուութեան, առանց ոչ ոքի նախազգուշաց-նելու, հեռացրել է յենասիւնները կամրջի տա-կից, ուստի եւ կամուրջը իսկոյն խորտակվել է:

ՕՊՐՏՈ: Ուսանողները վճեցին եռանդուն կերպով բողոքել կառավարութեան դէմ նրա համար, որ նա թոյլ է տալիս անգլիացիներին անցնել Բէլլայով:

ԲՕՆԱ: Մունկադի վախճանվեց այսօր Լն-դէնիսի հիւանդանոցում, Բօնի մօտ, իր կնոջ Թեւերի վրա: Մարմինը կը տեղափոխվի Բու-դապեշտ:

ԼՈՆԴՈՆ: Լրագրներին հաղորդում են Մեֆ-կինից. «Ահա մի քանի օր է արգէն, որ բօք-սները պայթեցնում են երկաթուղային գիծը Մեֆկինգի հարաւակողմում: Մեֆկինգի իշխա-նութիւնները Բօքսերոսի հարցին պատասխա-նեցին, թէ կարող են դիմանալ էլի մի ամիս»:

ՉԵԴԴԱ: Ապրիլի 26-ից մինչեւ 29-ը այս-տեղ ժամատարից բռնվելու 7 դէպք է եղել, նրանցից մէկը մահով վերջացան:

ԲՕՄՉՈՅ: Երէկ 400 բօքսեր յարձակումն գործեցին Բօսնօֆի արեւելեան կողմում անգ-լիացիների առաջաւոր պահակների վրա, բայց յետ մղվեցին: Անգլիայիները ոչ մի չկորուստ չունեցան:

ՊՐՏՈՒՄԱԿ: Այսօր էլի երեք հողի հիւան-դացան ժամատարից: Նաւերը ենթարկվում են խիստ կարանտինի:

ԼՈՆԴՈՆ: Այսօր Բօքսերոս հաղորդում է Բլումֆօնտէնից. «Երէկ Համիլտօնը հեծեալ հետեւակներով եւ Սմիթ Դօրրիէնի բրիգա-դայով դուրս եկաւ Տաբանչուից ու գնաց դէ-պի հիւսիս: Գառաւորների մօտ նրա ճանապարհը կտրեց բօքսերի մի բազմաթիւ զօրաբաժին Բօտայի առաջնորդութեամբ, որ այդ օրվայ ընթացքում ստացաւ ուրիշ օգնական զօրքեր: Գիւղեր եւ Պրենչին ուղարկեցի Տաբանչուից Համիլտօնի օգնական: Պրենչի կարող էր այդ անկ, որովհետեւ բօքսերի թիւը Տաբանչուի մօտ բաւականաչափ պակասել էր: Այսօր Հա-միլտօնին օգնութեան պիտի հասած լինին էլի ուրիշ զօրքեր: Երէկ նա կորցրեց 30 մարդ: Մակվելի բրիգադան, որ 7-րդ դիվիզիայի կազ-մին է պատկանում, գրաւեց Շարիկաալ եւ մի շարք բարձրութիւններ: Մի քանի ժամվայ ըն-թացքում կուրի մասնակցութիւն էին միայն հե-ծեալ հետեւակները»:

ԱՄՍԵՐԴԱՄ: Այն ճակիւրոյթի ժամանակ, որ կազմված էր ի պատիւ բօքսերի պատգա-մաւորութեան, կարգադրիչ յանձնաժողովի նա-խագահը, պատգամաւորների կենացը լսելիս, յայտնեց, թէ յուսով է, որ պատգամաւորները աղողութեամբ կը կատարեն իրանց ստանձնած գործը: Միշտ շնորհակալութիւն յայտնեց այն համակրանքի համար, որ ցոյց է տալիս բօք-սերին նրանց հետ մի եւ նոյն ծագումն ունե-ցող ժողովուրդը: Ապա կենացներ առաջարկ-վեցին ի պատիւ Կրիզէլի եւ Շտէնի: Մա-նաւոր քարտուղար Դէբրին Դէնիւ ճառ տուց, որի մէջ յայտնեց, թէ կարող է պատահել, որ իրանց ընտանեկներից վաղուց հեռացած մի քանի բօքսեր վերադարձած լինին տուն կարճ ժամանակով, բայց բոլորովին սխալ եւ հնա-

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET Cie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.
 Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՅ ԲԱԹՈՆԻՄ, չորեքշաբթի օրերը, երկու
 շաբաթը մի անգամ:
 Եւ հաւառաւը՝ Բաթոնմից Մարսէլ, ժամկէտով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
 Բաթոնմից՝ չորեքշաբթի, (26 ապրիլի) 9 ժպիսի ՄԻՆԳՐԵԼԻ չորեքշաբթի, նաւապետ ՇՐԼԵ: Եւ այսպէս
 չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ձախց յետոյ:
 Բաթոնմից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ արվում են սովորականից
 պակաս գներով:
 Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթոնմի եւ Անտվերպէնի մէջ, ընդու-
 նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
 Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու հա-
 մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակաւարներին:
 ԲԱԹՈՆԻՄՈՒՄ—պ. Վիկտոր Դ'Արնօին, Նաբէլէժնայա, ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարե-
 կնդաւանանին, Սիսնի փող. Պօլափարուխօյի եւ Մայստրաձէի քարվանսարաւ: ԲԱԳՈՒ—Եղբ.
 Վ. Ե. Ի. Մուժաֆեհաններին, Նաբէլէժնայա փողոց, տուն Կրասիլնիկօյի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
 ՄԻՅՍԿ—Վլադիկաւկայի երկաթուղու աւուստրալական գործակալութիւն (Է. հ. չ.) 10—20